

<< Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի (հասարակական միջոցառումների ծրագրերը) պահանջի վերաբերյալ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի գլխավորությամբ մարզպետարանն իրականացնում է հասարակական գործունեություն երիտասարդական քաղաքականության, ինչպես նաև կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացման ուղղությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից գործում է երիտասարդական խորհուրդ, որը մարզի երիտասարդության շրջանում իրականացնում է մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ երիտասարդական հավաք ճամբարներ, մրցույթներ, փառատոներ, բնապահպանական միջոցառումներ:

Մարզում գործող կրթամշակութային կազմակերպությունների կողմից կազմակերպվում են նկարների և ձեռարվեստի գործերի ցուցահանդեսներ, արվեստի տարբեր ոլորտներին վերաբերող՝ երգչախմբային արվեստի, երգի, պարի, ասմունքի մրցույթ-փառատոներ:

Նշվում են պետական տոները և ծիսական արարողությունները:

Մարզական ոլորտում ավանդաբար կազմակերպվում են ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>>, <<Անվասայլակով հաշմանդամ ունեցող լավագույն մարզական ընտանիք>>, <<Լավագույն նախադպրոցական մարզական հիմնարկ>>, <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>>, <<ՀՀ ԱԺ գավաթի խաղարկություն (1-6-րդ դասարանցիների համար)>>, նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական մարզական խաղեր, ինչպես նաև շախմատի, ֆուտբոլի, վոլեյբոլի:

Հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կազմակերպվում են քննարկումներ և հանրային լուումներ:

Մարզում իրականացվող հասարակական միջոցառումների շրջանակում կազմակերպվում են նաև բարեգործական միջոցառումներ: